Արձանագրություն N 2

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից հայկական մեդիա դաշտի մոնիթորինգի և վերլուծության ավտոմատացված առցանց հարթակի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃՇՁԲ-22/4 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան, Բաղրամյան 19	24 դեկտեմբերի 2021թ. ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Պարսիլյան, Դ.Օհանջանյան, Ա.Բեգոյան, Ա.Լալայան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Ներսիսյան

1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի գնի վերաբերյալ

Չափաբաժնի համարը	***Չափաբաժնի անվանումը***	***Գնման հայտով սահմանված գնվելիք ապրանքի գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)***
1	Հայկական մեդիա դաշտի մոնիթորինգի և վերլուծության ավտոմատացված առցանց հարթակի ծառայությունների	4176000

2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 22.12.2021 թ.-ին ժամը 10:30-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 23.12.2021 թ.-ին ժամը 10:30-ին:

3. Հայտեր ներկայացրած մասնակիցների փվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

Հ/h	***Մասնակիցների անվանումները***	***Գործունեության հասցեն***	***Կապի միջոց***	***Էլ. հասցե***
1	«Ռումորս» ՍՊԸ	ք. Երևան, Ծարավ Աղբյուրի 55/17,199	011 205151	-

4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃՇՁԲ-22/4 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների նկատմամբ գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ

Հ/Հ	Մասնակից	Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/			Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/			Նախահաշիվ ՀՀ դրամ
		Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին	
1	«Ռումորս» ՍՊԸ	4176000	0 %	4176000	4176000	0 %	4176000	4176000

Աճուրդն ամփոփվել է 23.12.2021թ. և Համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է համարվել «Ռումորս» ՍՊԸ-ն:

7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերի/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին

Հանձնաժողովն ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած հայտը, արձանագրեց, որ «Ռումորս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ /Հավելված 1.2/ վերջին էջում բացակայում է էլ.ստորագրությունը, ինչպես նաև 4-րդ կետում համայնքը և վարչատարածքային միավորը բաժինները (4.3.2,4.3.3,4.4.2 և 4.4.3 ենթակետերը) ենթակա են շտկման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետով, ինչպես նաև ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-22/4 ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ Հանձնաժողովը որոշեց՝ 24.12.2021թ-ին նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ «Ռումորս» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

8.Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 28.12.2021թ. ժամը 10:30-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

9/. 28.12.2021թ. ժամը 10:30-ին նիստը վերսկսելու վերաբերյալ

Նիստը վերսկսվեց 28.12.2021թ. ժամը 10:30-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ «Ռումորս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Ռումորս» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:

10. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ

28.12.2021թ.-ին գնահատող հանձնաժողովը որոշեց՝

10.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Ռումորս» ՍՊԸ-ին հայտարարել որպես ընտրված մասնակից:

10.2 Հաստատել էլեկտրոնային աճուրդի միջոցով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

10.3 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն անգործության ժամկետը կիրառելի չէ:

10.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Թորոսյան

անդամներ՝ _____ Տիգրան Պարսիլյան

_____ Դավիթ Օհանջանյան

_____ Արտակ Բեգոյան

_____ Անժելա Լալայան

քարտուղար՝ _____ Անի Ներսիսյան